

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2011թ. հունվար-մարտին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 37596 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ)¹, ինչը 2010թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 13.9%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

մարդ

	2010թ. հունվար-մարտ	2011թ. հունվար-մարտ	Աճի տեմպը, %	Տեսակարար կշիռը (2011թ. հունվար- մարտ,%)
Ընդամենը զբոսաշրջիկներ²	33009	37596	113.9	100.0
որոնցից ըստ նպատակի՝				
գործնական	10881	13489	124.0	35.9
հանգստի և ժամանցի	18509	19986	108.0	53.1
բուժման	1123	1088	96.9	2.9
այլ	2496	3033	121.5	8.1

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

² Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: